ՏԱՃԱՐԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ X—XIII ԴԱՐԵՐԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Հ. Ա. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի X—XIII դդ. վանքային համալիրների ճարտարապետական ամբողջության մեջ նշանակալից դեր է ունեցել հիմնական պաշտամունքային կառույցների մուտքերին կից համամասնական հողակտորների կազմավորումը։ Մի շարք վանքերի ուսումնասիրությունից (Սանահին, Հաղարծին, Մակարավանք, Կեչառիս և այլն) ակնհայտ է դառնում վանքերի և նրանց կից կանոնավոր երկրաչափական ձև ունեցող հողակտորների միջև գոյություն ունեցող որոշակի կապը։ Այս հանգամանքը հատակագծումների օրինաչափությունների առաջացման պատճառ է հանդիսանում։ Նշված ժամանակների վանքային համալիրների տարածքում հիմնական պաշտամունքային կենտրոն են համարվել երկու եկեղեցի, որոնք, բացի արևմտյան գլխավոր մուտքից, ունեցել են նաև լրացուցիչ կողմնային մուտք հյուսիսից կամ հարավից։

Ուսումնասիրենք գլխավոր մուտքի հրապարակը։ Այդ հրապարակի ստեղծման հիմնական նախադրյալները հետևյալներն են.

1. Հավատացյալների հոծ զանգվածների վանքում չտեղավորվելու պատճառով արտավանքային լսարան գոյացնելը (ներվանքային և արտավանքային լսարանների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով վանքի մուտքի բացօթյա հրապարակը շրջափակում էին պատերով՝ ստեղծելով գավիթ)։

2. Նախքան գավիթների երևան գալը վանքից արևմուտք, որպես ամենապատվավոր տեղում, աշխարհիկ և հոգևոր նշանավոր անձանց դամբանատեղերի առաջանալը[1]։ Այսպիսով, գավթի առաջացումով արևմտյան հրապարակը միաժամանակ դառնում էր յուրատեսակ պանթեոն։

Գավիթները միևնույն ժամանակ ծառայել են իբրև ժողովատեղեր, որտեղ քննարկվել են եկեղեցու հետ կապ չունեցող հարցեր։ Ն. Մառը նշում է. «Հայկական ճարտարապետության մեջ գավիթներն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ եկեղեցիների ներքին տարածությունները սկսում են չբավարարել և աղոթողները տեղ չգտնելով եկեղեցու ներսում՝ հավաքվում են գավթում։ Բացի այդ, գավիթներում էին թաղվում նաև նշանավոր անձինք և այդ կառույցներն ըստ էության հանդիսանում էին յուրատեսակ պանթեոններ։ Միաժամանակ գավիթներում էին հավաքվում ոչ միայն եկեղեցական, այլև հասարակական և քաղաքական ամենատարբեր հարցերի քննարկման համար»[2]։

Այսպիսով, եկեղեցու մուտքի արևմտյան կողմում առաջանում էին փակ հրապարակներ՝ գավիթներ։ Միաժամանակ, միշտ չէ, որ երկու եկեղեցիներն են իրենց առջևում գավիթներ ունեցել (ինչպես Սանահինում, Հաղարծինում)։ Հաճախ գավիթ առաջացել է նրանցից միայն մեկի առջև (Կեչառիս, Գոշավանք)։ Այդ դեպքում գավիթ չունեցող եկեղեցու արևմտյան մուտքի առջև թողել են ոչնչով չսահմանափակված ազատ տարածություն կամ էլ եկեղեցու առջև, նրանից արևմուտք, հետագայում կառույց հայտնվելու դեպքում նրա և եկեղեցու միջև վանքի լայնության չափով ազատ տարածություն են թողել, որից եկեղեցու առջևի հրապարակը ստացել է մոտավորապես քառակուսու ձև (ինչպես Մակարավանքում՝ Աստվածածին եկեղեցու առջև, Գոշավանքում՝ Ս. Գրիգորի եկեղեցու առջև)։ Ուշագրավ է, որ մեծ մասամբ գավիթը քառակուսու ձև ունի։

---

[1] Շ. Խ. Մնացականյան. Архитектура армянских притворов. Ереван, 1952, с. 9.

[2] Н. Я. Марр. Ани, столица древней Армении.—Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898, с. 112.

Այնուամենայնիվ վերոնշյալից կարելի է հաստատել, որ եկեղեցու գլխավոր մուտքի առջև, գավիթների հայտնվելուց առաջ, ի հայտ են եկել ուրույն դեր ունեցող տարածություններ, որոնք իրենց հերթին նախադրյալ են հանդիսացել գավիթների առաջացման համար։

Վանքային հասալիրների ծավալատարածական լուծումների մեջ դա արտահայտվել է կառուցվող օբյեկտների համապատասխան հորինվածքներում, այսինքն, հետագայում կառուցվող օբյեկտները դասավորվել են այնպես, որ աղատ թողնելով վանքամերձ տարածությունը՝ չփակեն եկեղեցու մուտքը կամ հաջորդ օբյեկտը այնպես պետք էր զետեղել, որ չփակվի վանքի մուտքը, վանքամերձ տարածությունը մնա աղատ կամ հաջորդ օբյեկտը հեռացվի որոշ տարածության վրա՝ ապահովելով քառակուսու ձև ունեցող հողակտորի, իրրե հրապարակի, ձևավորումը։ Հետևաբար, տաճարային հրապարակի ձևավորումը ունեցել է երկու փուլ.

1. Վերոհիշյալ նախադրյալները։
2. Դրանց ձևավորումը։

Արևմտյան հրապարակների բնորոշ առանձնահատկությունը եկեղեցու գլխավոր ուղու վրա այցելուների ճանապարհի ճիշտ ուղեգծումն է։ Արևմտյան կողմից եկող այցելուն, որտեղ մեծ մասամբ գտնվել է եկեղեցու տարածքի մուտքը՝, պետք է կտրեր անցներ շքամուտքը, հետո մտներ գավիթ, որից հետո մուտք գործեր եկեղեցի։ Այսպիսով, արևմտյան հրապարակները դառնում էին յուրատեսակ նախամուտք՝ եկեղեցու մուտքի ճանապարհին։

Այլ նպատակ ունեն եկեղեցու կողմնային մուտքերը, որոնք թողնվել են հյուսիսային կամ հարավային կողմից։ Սանահինում Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիները մուտք ունեն հյուսիսային կողմից, Հաղպատում Ս. Նշանի վանքը՝ հյուսիսային կողմից, Կեչառիսում Գրիգորի եկեղեցին՝ հարավից, իսկ Կաթողիկե եկեղեցին՝ հյուսիսից, Գոշավանքում Աստվածածին եկեղեցին՝ հյուսիսից , այդպես է նաև նման մյուս բոլոր եկեղեցիներում։ Նախ հարկ է որոշել լրացուցիչ մուտքերի դերը։

Կողմնային մուտքը, ի տարբերություն գլխավորի, նախատեսված է առաջին հերթին եկեղեցու սպասավորների համար, որպեսզի նրանք կարողանան կարճ ճանապարհով մտնել խորան (որը տեղավորված է եկեղեցու կցաշենքերից մեկում)՝ հանդերձավորվելու համար[4]։

Լրացուցիչ մուտքը ծառայողական լինելուց բացի, այցելուների պահեստային նպատակ է հանդիսացել, քանի որ միակ արևմտյան մուտքը դժվարացրել է ինչպես առաջին շարքում՝ բեմի առաջ կանգնած առանձին մարգկանց, այնպես էլ սպասավորների ամբողջ կազմի ելքը եկեղեցուց։ Լրացուցիչ մուտքը հատուկ նշանակություն է ձեռք բերել եկեղեցու արևմտյան կողմը զբաղեցնող (որտեղ գլխավոր մուտքն է գտնվել) գավիթների ի հայտ գալով։ Եկեղեցում գտնվող այցելուները դուրս գալու համար պետք է անցնեին գավթում տեղ գտած բազմության միջով։ Կարելի է ենթադրել, որ կողմնային մուտքը նախատեսվել է արտոնյալ դասի համար, որոնց ներկայացուցիչները եկեղեցում զբաղեցնում էին լավագույն տեղերը՝ գմբեթաներքո տարածությունը և բեմի առաջին շարքերը։ Նման մոտեցումը հնարավոր էր դարձնում ապահովել շենքում որոշակի տեղեր զբաղեցնող ազնվականության ներկայացուցիչների ելումուտը եկեղեցի՝ չշփվելով հասարակ ժողովրդի հետ։ Հետագայում, երբ վանքը կառուցապատվում է բազմաթիվ շինություններով, կողմնային մուտքն ապահովում է ամենակարճ կապը շինությունների և եկեղեցու միջև։ Նախատեսված տեղադրությունները հնարավոր են դարձնում եկեղեցու լրացուցիչ մուտքի առջև ազատ տարածության առաջացումը, որը վանքային համալիրի ձևավորման փուլում վերակառուցվում է, և որի ձևագոյացման մեջ դիտվում են լիարժեք նախագծային օրինաչափություններ։

Ուսումնասիրենք մի քանի վանքեր։

---

[3] Օ. Խ. Խալպախչյան. Гражданское зодчество Армении. М., 1971, с. 40..
[4] Օ. Խ. Խալպախչյան. Санаин. М., 1973, с. 25.

Սանահինի վանքում[5] երկու եկեղեցիներն էլ՝ Աստվածածին և Ամենափրկիչ, լրացուցիչ մուտք են ունեցել հյուսիսային կողմից։ Շինարարական հաջորդ փուլում (X դարի 80-ական թթ.) կառուցվել է Գրիգոր Լուսավորչի մատուռը՝ Աստվածածին եկեղեցուց արևելք։ Դրանով Ամենափրկիչ եկեղեցու հյուսիսային մուտքի մոտ առաջացել է քառակուսու ձև ունեցող երկրաչափորեն կանոնավոր գծերով հրապարակ։ Հրապարակը ընդհանուր է դառնում Ամենափրկիչ եկեղեցու և Գրիգոր Լուսավորչի մատուռի համար։ Հետագայում, X դարի վերջում—XI դարի սկզբում, երկու եկեղեցիների միջև «Ակադեմիայի» առաջացումով Ամենափրկիչ եկեղեցու հյուսիսային մուտքը փակվում է, բայց հրապարակը պահպանվում է սկզբնական տեսքով։ Աստվածածին եկեղեցու հյուսիսային մուտքի առջևի տարածությունը մնում է ազատ։

1063 թ. Աստվածածին եկեղեցուց հյուսիս-արևելք կառուցվում է գրատուն, որն անմիջականորեն կապված է Աստվածածին եկեղեցու հետ, ավելի ճիշտ՝ նրա հյուսիսային մուտքի հետ։ Պետք է նկատել, որ գրատան հիմնադրումը եկեղեցու հյուսիսային կողմում նպատակամղված է երկու օբյեկտների միջև անմիջական կապ ստեղծելուն։ Դրա հետ մեկտեղ, եկեղեցու նկատմամբ ուղղանկյան տակ գտնվելով, գրատունը իր և եկեղեցու միջև գտնվող տարածությանը տալիս է կանոնավոր երկրաչափական ձև, որի երկու կողմերը գրեթե հավասար են իրար (նկ. 1), դրա հետևանքով հրապարակը քառակուսու ձև է ընդունում։ Հետագայում (1181, 1211 թթ.) կառուցվում են վանքերի գավիթները։ Այսպիսով, Աստվածածին եկեղեցու հյուսիսային մուտքը, իր առջև ունենալով ազատ տարածություն, վանքի և նրա մյուս օբյեկտների՝ գրատան, Գրիգոր Լուսավորչի մատուռի և զանգակատան միջև եղած կապի տեսակետից արդյունավետ է դառնում։ Տվյալ դեպքում էական տարբերություն է նկատվում եկեղեցիների հրապարակների երկու տիպերի՝ արևմտյանի և հյուսիսայինի միջև։ Արևմտյան հրապարակները գտնվում են դեպի եկեղեցու պաշտամունքային կենտրոն տանող գլխավոր ուղու վրա, այսինքն արևմուտքից արևելք, իսկ հյուսիսային հրապարակները գտնվում են համալիրի խորքում։ Առաջինները դառնում են հանրամատչելի, երկրորդներն օգտագործվում են մասնակիորեն։ Այսպիսով, կողմնային հրապարակների ձևավորումը կատարվում է այնպես, ինչպես արևմտյան հրապարակներինը։ Լրացուցիչ մուտքի գոյության պայմաններում նրա առջև մնում է ազատ տարածություն։ Այնուհետև, շինարարության ծավալի ընդարձակման չափով, համալիրի տարածքի ազատ տարածությունը շրջափակվում է՝ ստանալով երկրաչափական ձև։

Քննարկենք եկեղեցական հրապարակների ձևագոյացումը Գոշավանքում[6]։

Ապագա համալիրի առաջնեկը՝ Աստվածածին եկեղեցին, բացի գլխավորից ունի նաև հյուսիսային մուտք։ 1197—1203 թթ. նրա արևմտյան մուտքի առջև գոյանում է գավիթ, որով արևմտյան հրապարակի ձևագոյացումն ավարտվում է։ Հետագայում Աստվածածին եկեղեցուց հարավ 1208—1241 թթ. կառուցվել է Ս. Գրիգոր եկեղեցին։ Որոշ ժամանակ անց եկեղեցու արևմտյան կողմում կառուցվում է Գրիգոր Լուսավորչի մատուռը։ Ուշագրավ է, որ Ս. Գրիգոր եկեղեցու և մատուռի միջև ընկած տարածությունը դառնում է կանոնավոր, քառակուսաձև հրապարակ (նկ. 2)։

Նույն ձևն ունի Աստվածածին եկեղեցու գավիթը։ 1241—1291 թթ. Աստվածածին եկեղեցուց հյուսիս-արևմուտք կառուցվում է գրատուն։ Տեղի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով.

1. Տեղանքի ռելիեֆով (հյուսիս-արևելքից ուղղաձիգ զառիվայր է)։

2. Գրատունը կառուցվել է եկեղեցու լրացուցիչ մուտքի կողմը, որը կապում է այդ երկու օբյեկտները կարճ ճանապարհով՝ առանց գավիթ մտնելու։

Ակնհայտ է, որ գրատան դիրքն է որոշել հյուսիսային տաճարային հրա-

---

5 Նույն տեղում, էջ 16։

6 Ի. Բ. Էլլարյան. Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1980, էջ 47—50։

պարակի ձևը, քանի որ հատկապես նման զուգակցումն է կանոնավոր երկրաչափական ձև տալիս նրանց միջև եզրափակված հողակտորին։ Այսպիսով, Գոշավանքում, ինչպես նաև Սանահինում առկա են երկու տիպի հրապարակներ՝ արևմտյան և հյուսիսային։

Հաղարծնի[7] վանքի Ս. Գրիգոր եկեղեցին (X—XI դդ.), որը ապագա համալիրի առաջնեկն է, ունի միայն արևմտյան մուտք։ Լրացուցիչ մուտքի բացակայությունը լրացատրվում է եկեղեցու փոքր չափերով (9,8×8,8 մ), որի հետևանքով լրացուցիչ մուտքի վերոհիշյալ ֆունկցիաները տվյալ դեպքում իմաստազրկվում են։ XII դարի վերջին և XIII դարի սկզբին արևմուտքից եկեղեցուն հարադրվում է գավիթը՝ ձևավորելով եկեղեցու արևմտյան հրապա-



Նկ. 1 Նկ. 2

րակը։ 1244 թ. եկեղեցու արևելյան կողմում կառուցվում է Ս. Ստեփանոսի մատուռը, 1281 թ.՝ Ս. Աստվածածին եկեղեցին, որը տեղադրվել է Ս. Գրիգոր եկեղեցուց դեպի հյուսիս։ Նոր եկեղեցու հորինվածքը յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ, ի տարբերություն քննարկված դեպքերի՝ որտեղ կողմնային հրապարակների ձևավորումն ընթացել է քաղաքացիական կառույցների կողքին, լրացուցիչ մուտք ունեցող, հետագայում առաջացած եկեղեցիներն են որոշել իրենց կողմնային մուտքի հարցը։ Այցելուների թվի բազմապատկման հետևանքով Ս. Գրիգորի փոքր եկեղեցին այլևս չի տեղավորել հավատացյալներին, ուստի անհրաժեշտ է դարձել մեծ եկեղեցի կառուցելը։ Ի տարբերություն փոքրի, մեծ եկեղեցին ունեցել է նաև լրացուցիչ մուտք։

Հաղարծինում տեղանքի բարդության պատճառով համապատասխան որոշում կայացնելը դժվար էր։ Պաշտամունքային կառույցների արևելյան և հարավային կողմում կիրճն է, իսկ հյուսիսից՝ բլրոտ բարձունքը։ Հին շինարարները հյուսիսային կողմում կառուցում են Աստվածածին նոր եկեղեցին, կտրելով բլրի զգալի մասը այն հաշվով, որպեսզի նոր եկեղեցու հարավային մուտքի առջև գոյանա ազատ տարածություն, որի լայնությունը հավասար լինի Ս. Գրիգոր եկեղեցու լայնությանը (նկ. 3)։

XIII դարի վերջին եկեղեցու գլխավոր մուտքի մոտ գավիթ է կառուցվում, որը Ս. Գրիգոր եկեղեցու գավիթի հետ մեկտեղ դառնում է եկեղեցիների նախամուտք։ Աստվածածին եկեղեցու հարավային հրապարակ հնարավոր է մտնել երկու գավիթների միջև առաջացած անցումի միջոցով։ Միաժամանակ, հետագայում հարավային հրապարակը կորցնում է իր նախնական ձևը, քանի որ XIII դարի վերջում Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան պատի մոտ կառուց-

[7] Օ. Խ. Խալպախչյան. Гражданское зодчество Армении, с. 155.

վում է մատուռը, զգալիորեն կրճատելով հրապարակի չափերը։ Պետք է նկատել, որ մատուռը հարկադրաբար է այդտեղ կառուցվել, քանի որ համալիրի կառույցների խիտ լինելը, բարդ ռելիեֆի պայմաններում, մատուռի կառուցումը այլ տեղում բացառում է։

Հետաքրքրություն է ներկայացնում Կեչառիսի վանքի կողմնային հրապարակների ձևավորումը[8], որը պաշտամունքային բոլոր օբյեկտների համար դառնում է ընդհանուր, քանի որ ի տարբերություն Հայաստանի համանման համալիրների, Կեչառիսի հիմնական կառույցները դասավորված են ուղիղ անկյան կից կողմերի երկարությամբ։

Վանքի առաջին կառույցը եղել է Ս. Գրիգոր եկեղեցին, որն ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից։ Հաջորդ կառույցը Ս. Նշանի մատուռն է, որը գտնվում է եկեղեցուց հարավ։ Պետք է ենթադրել, որ հին վարպետները մատուռը հատակագծելիս ղեկավարվել են եկեղեցու լրացուցիչ մուտքի առկի հրապարակի ձևավորման միևնույն հաստատուն սկզբունքով։ Հավանաբար դա է պատճառը, որ այն տեղադրված է Ս. Գրիգոր եկեղեցու կողմնային մուտքի մոտ, թեև տեղանքի պայմանները և ռելիեֆը թույլ են տալիս մատուռի կառուցումը ցանկացած ուղղության վրա։ Եկեղեցու և մատուռի միջև եղած հեռավորությունը պատահական չէ, քանի որ կառույցների միջև ընկած տարածությունը կանոնավոր հրապարակի ձև է ստացել, որի երկու կից կողմերը գրեթե հավասար են (նկ. 4)։

Հետագայում Ս. Գրիգոր եկեղեցու և Ս. Նշանի մատուռի միջև ընկած միջակա տարածության վրա կառուցվել են փոքրիկ մատուռներ, որի հետևանքով հրապարակը արևելքից և հյուսիսից փակվելով ստացել է ավարտուն տեսք։

XII դարի երկրորդ կեսին Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան մուտքի առկի կառուցվում է գա-



Նկ. 3



Նկ. 4

վիթ, իսկ XIII դարի առաջին քառորդում Ս. Նշանի մատուռից հարավ, փոքր հեռավորության վրա, կառուցվում է Կաթողիկե եկեղեցին՝ մասնակիորեն փակելով գոյացած հրապարակը հարավից։ Այսպիսով, Կաթողիկե եկեղեցին, բացի

[8] Ս. Հ. Հալպախչյան. Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 228—236.

գլխավորից, ունենալ է նաև լրացուցիչ մուտք հյուսիսից, որը անմիջականորեն եկեղեցին կապում է մերձակա հրապարակի հետ։ Այդօրինակ հրապարակը վանքի բոլոր պաշտամունքային օբյեկտների համար կապող օղակ է դառնում։

Գտնվելով համալիրի կենտրոնում, հրապարակը զգալիորեն հեռացել է այցելուների հիմնական հոսքից, որը շարժվելով արևմուտքից արևելք գլխավոր մուտքից դեպի վանք, եկեղեցի է մտնում արևմտյան մուտքով։

Մակարավանքում՝ արևմտյան և կողմնային հրապարակները միավորվում են մեկ ամբողջության մեջ՝ ակնհայտորեն դրսևորելով ձևագոյացման միևնույն սկզբունքները։ Ինչպես արդեն ասվել է, գավիթի մեջ մտնող արևմտյան հրապարակները ունեն քառակուսու ձև։ Եկեղեցային հրապարակների լրացուցիչ մուտքերին կից հրապարակները համալիրի ձևավորման ընթացքում նույնպես քառակուսու ձև են ստանում։ Տվյալ դեպքում առաջին եկեղեցին լրացուցիչ մուտք չունի։ 1204 թ. նրանից հարավ-արևմուտք կառուցվում է Աստվածածին մեծ եկեղեցին, որը բացի արևմտյանից ունի նաև հյուսիսային մուտք։



Նկ. 5

Եկեղեցիների շախմատաձև դասավորությունը ստեղծում է կանոնավոր ձևի կից հողակտորներ, որոնց երկու կողմերը գրեթե իրար հավասար են (նկ. 5)։ Տվյալ հողակտորը հրապարակը սահմանակցում է սկզբնակառույց Ս. Գրիգոր եկեղեցուն արևմուտքից, իսկ Աստվածածին եկեղեցուն՝ հյուսիսից։ Հետագայում ընդհանուր տարածությունը սահմանափակվում է գավիթով, բաց հրապարակը վերածվում է փակի։

Այնուհետև Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի առջև, մուտքից որոշ հեռավորության վրա, եկեղեցու արևմտյան պատին հավասար կառուցվում են տնտեսական շինություններ, որի հետևանքով արևմուտքից և արևելքից սահմանափակված հողակտորը ընդունում է բնորոշ քառակուսու ձև (նկ. 5)։

Մի շարք վանքային համալիրներ ուսումնասիրելուց հետո, եկեղեցային հրապարակները անվիճելիորեն կարելի է բնորոշել որպես ծավալահատակագծային անսամբլի կառուցվածքի կարևորագույն բաղադրամաս, ինչպես նաև հայտնաբերել նրանց առանձնահատկությունները և բնութագրել նրանց ըստ երկու հիմնական տիպերի՝ առաջին տիպին են պատկանում եկեղեցի տանող գլխավոր մուտքին կից արևմտյան հրապարակները, իսկ կողմնային լրացուցիչ մուտքերին կից հողակտորների վրա գտնվող հրապարակները պատկանում են երկրորդ տիպին։

Արտաքին և ներքին եկեղեցային տարածությունների փոխադարձ կապի ապահովումը երկու տիպերի համար համանման դիրք է ենթադրում։ Այդ դեպքում արևմտյան հրապարակները հաճախ հանդիսացել են քաղաքացիական նշանակության ժողովատեղեր, որտեղ կազմակերպվել են բազմամարդ հասարակական ժողովներ։ Միաժամանակ, արևմտյան հրապարակները վերածվել են եկեղեցական լսարանների յուրօրինակ շարունակության։ Այդ և այլ

---

9 Նույն տեղում, էջ 410—418։

հանգամանքներ։ փակ, ծածկած հրապարակների՝ գավիթների առաջացման պատճառ են հանդիսացել, որոնք փաստորեն ծառայում են միայն այն եկեղեցուն, որին կից են։ Համալիրի խորքում, լրացուցիչ մուտքերի մոտ, վանքի պաշտամունքային կենարոնի կենարոնական մասում գտնվող հրապարակները թողնվել են բաց, քանի որ նախատեսված են եղել վանքի ծառայողների և այցելուների որոշ մասի համար։ Այդ պատճառով շատ դեպքերում պաշտամունքային և քաղաքացիական շինությունները խմբավորվել են հրապարակի շուրջ։

Ինչպես հայտնի դարձավ բերված օրինակներից, երկու տիպի հրապարակներն էլ ունեն կանոնավոր երկրաչափական ձև (քառակուսուն մոտ)։ Այսպիսով, անհրաժեշտ ձևի հրապարակ ստանալու համար շինարարները կառույցները գասավորել են այդ նպատակին համապատասխան։ Ստեղծվել է օբյեկտների փոխադարձ հեռացում, որոշվել է նրանց միջև եղած տարածության չափը։ Վերոհիշյալից պարզ է դառնում, որ քննարկված ծավալահատվածային համակարգը՝ տաճարային հրապարակը, նրա նշանակությունը, բնույթը, ձևագոյացման եղանակները հնարավորություն են տալիս պարզաբանելու հայկական վանքային համալիրների կառուցման օրինաչափությունների հետ կապված մի քանի ստվերոտ հարցեր։

РОЛЬ СОБОРНЫХ ПЛОЩАДЕЙ В ФОРМИРОВАНИИ МОНАСТЫРСКИХ КОМПЛЕКСОВ АРМЕНИИ X—XIII вв.

О. А. ТОРАМАНЯН

Резюме

Особое значение в формировании композиции монастырских комплексов Армении X—XIII вв. имели соотношения различных объемов с окружающим их пространством. Взаимосвязь строилась по принципу продолжения внутреннего пространства во внешнем, чему во многом способствовали устав, а также стремление к созданию промежуточной инстанции перед основным объектом посещения. Внимание акцентировалось на участках, непосредственно примыкающих к культовым сооружениям. Закономерной особенностью этих площадей становилось стремление к заданной форме. Организация их имеет особое значение в масштабах общемонастырского планирования, так как в этом формообразовании принимало участие большинство монастырских строений. Для получения необходимого геометрического результата иногда проводился целый ряд объемно-планировочных комбинаций. Так возникала стройная архитектурная система, где одним из главных компонентов становилась соборная площадь, подчиненная заданной форме.